ք. Երևան

Ե-22/__ 08.12.2022թ.

HETQ.am-ի լրագրող
Անյա Սարկիսովային

Հարգելի՛ Անյա Սարկիսովա,

Ի պատասխան Ձեր՝ «Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ Ընկերություն) հասցեագրված 2022 թվականի նոյեմբերի 30-ի հարցման, տեղեկացնում եմ, որ Ընկերությունը չունի իրեն սեփականության իրավունքով պատկանող տերմինալներ, որոնք տեղակայված լինեն Երևան համայնքում, որոնց համար ուղղակիորեն պայմանագրային իրավահարաբերություններ առաջանան (հողի վարձակալության, տեղադրման թույլտվության, արտաքին գովազդ) Ընկերության և Երևանի համայնքապետարանի միջև:
Տեղեկացնում եմ նաև, որ այն բոլոր տերմինալները, որոնց վրա առկա է Ընկերության ապրանքային նշանը, սեփականության իրավունքով պատկանում են երրորդ անձ կազմակերպությունների կամ անհատ ձեռներեցների, որոնց հետ Ընկեությունը ունի կնքած պայմանագրեր, որոնցով ընկերությունը ծրագրային լուծում է ապահովում՝ որպես վճարահաշվարկային կազմակերպություն նշված տերմինալների միջոցով վճարումներ հավաքագրելու համար: Նշված տերմինալների արտաքին գովազդից ստացված եկամուտները հանդիսանում են ոչ թե Ընկերության, այլ երրորդ անձ կազմակերպությունների եկամուտները, եթե այդպիսիք առկա են: Միևնույն ժամանակ նշված երրորդ անձ կազմակերպություններն են հոգում Երևան համայնքում տերմինալներ տեղադրելու համար անհրաժեշտ պայմանագրեր կնքելու կամ թույլտվություն ստանալու հարցերը:
Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Ձեր հարցման մեջ վկայակոչված հարցերի պատասխանները չենք կարող տրամադրել, քանի որ այդ տեղեկատվությանը չենք տիրապետում:

Տնօրեն՝ Արսեն Քդենյան